ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

ՕԳՈՍՏՈՍԻ 19-ԻՆ, ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, «Ցիշատակ մեռելոց»։ Մայր Տաճարում պատարագեց հոգեշնորհ Տ. Մաշտոց աբեղա Թաջիրյանը։ Հավարտ սուրբ պատարագի կատարվեց հոգեհանգիստ «վասն համօրէն ննջեցելոց»։

***

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 1-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, «Տօն գիւտի գօտւոյ Սրբուհւոյ Աստուածածնի»։ Մայր Տաճարում պատարագեց արժանապատիվ Տ. Հակոբ քահանա Հակոբյանը։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

***

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 4-ԻՆ, ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, Մայր Աթոռ ժամանեց Կալիֆորնիայից եկած ուխտավորների առաջին խումբը՝ բաղկացած 33 հոգուց։ Երևանի օդանավակայանում ուխտավորներին դիմավորեցին հոգեշնորհ Տ. Եղիշե և Տ. Մուշեղ վարդապետները։

Ուխտավորները Մայր Աթոռում կմնան շուրջ 20 օր, կայցելեն այլ սրբավայրեր և Հայրենիքի տեսարժան վայրերը։

***

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 8-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, «Տօն ծնընդեան Սրբուհւոյ կուսին Մարիամու յԱննայէ»։ Օրվա տոնի կապակցությամբ Մայր Տաճարում պատարագեց և քարոզեց հոգեշնորհ Տ. Մեսրոպ վարդապետ Անթաբյանը։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

Սուրբ պատարագին ներկա էր նաև Կալիֆորնիայից եկած ուխտավորների խումբը, որոնք հետ սուրբ պատարագի պաշտոնապես ներկայացան Վեհափառ Հայրապետին Նրա օրհնությունը ստանալու համար։

***

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 16-ԻՆ, ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, «Ցիշատակ մեռելոց»։ Մայր Տաճարում պատարագեց հոգեշնորհ Տ. Մաշտոց աբեղա Թաջիրյանը։ Հավարտ սուրբ պատարագի կատարվեց հոգեհանգիստ «վասն համօրեն ննջեցելոց»։

***

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 20-ԻՆ, ՈՒՐԲԱԹ, առավոտյան ժամը 11-ին, Վեհափառ Հայրապետը Երևանի օդանավակայանից մեկնեց Բաքու հովվապետական այցելության։

Վեհափառ Հայրապետին ճանապարհեցին Մայր Աթոռի ամբողջ միաբանությունն ու պաշտոնեությունը։

Ողջերթի համար Երևանի օդանավակայանն էր եկել նաև Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ պարոն Սարգիս Գասպարյանը։

Վեհափառ Հայրապետին ընկերակցում էին դերաշնորհ Տ. Սահակ և Տ. Վարդան սրբազանները, հոգեշնորհ Տ. Հայրիկ վարդապետ Ավետիսյանը, հոգեշնորհ Տ. Հուսիկ աբեղա Սանթուրյանը և բարեշնորհ՝ Հովհաննես սարկավագ Դանիելյանը։

ԱՑՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՕԳՈՍՏՈՍԻ 14-ԻՆ ՄԱՑՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾԻՆ այցելեց անգլիական գրող և խաղաղության կողմնակիցների շարժման ակտիվ մասնակից Ջեյմս Օլդրիջը իր տիկնոջ և երեխաների հետ։ Ջեյմս Օլդրիջը՝ «Դիվանագետ» և «Որսորդ» վեպերի մեծանուն հեղինակը՝ եղավ Մայր Տաճարում, եկեղեցահնագիտական թանգարանում և հետաքրքրվեց Մայր Տաճարի շինության և պատմության մանրամասնություններով։

***

ՕԳՈՍՏՈՍԻ 15-ԻՆ Ս. ԷՋՄԻԱԾԻՆ այցելեց «Մանչեստր գարդիան» թերթի թղթակից Էննա Վենդերը։

***

ՕԳՈՍՏՈՍԻ 20-ԻՆ Ս. ԷՋՄԻԱԾԻՆ այցելության եկավ «Կամո» կինոժապավենի սցենարի հեղինակ Մարկ Մաքսիմովը։

***

ՕԳՈՍՏՈՍԻ 28-ԻՆ ՄԱՑՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾԻՆ այցելեցին Ֆինլանդիայի Սեյմի մի խումբ դեպուտատներ, որոնց թվում գրականության և արվեստի պրոֆեսոր Վուտրենրիննե Տոյվո Իլմարին (պատվիրակության ղեկավար)։ Հարգելի հյուրերը եղան Մայր Տաճարում և թանգարանում։ Ապա հյուրերը Վեհարանում ընդունվեցին Վեհափառ Հայրապետի կողմից, որը ջերմ զրույց ունեցավ նրանց հետ։

Ֆինլանդիայի Սեյմի դեպուտատները հրաժեշտ առին Վեհափառ Հայրապետից և Մայր Աթոռից լավագույն տպավորություններով։

***

ՕԳՈՍՏՈՍԻ 30-ԻՆ Ս. ԷՋՄԻԱԾԻՆ այցելեց հունգարական ճարտարապետների պատվիրակությունը, որին գլխավորում էր դոկտոր Գեյրո Լասլոն։ Հյուրերը հետաքրքրությամբ դիտեցին հնամենի Տաճարը։

Հունգարական ճարտարապետների պատվիրակությանը վերջում ընդունեց Վեհափառ Հայրապետը։

Մայր Տաճար այցելողներին ընդունում և առաջնորդում էր թանգարանի վարիչ հոգեշնորհ Տ. Հուսիկ աբեղան։